ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

15 մայիսի 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 անդամներ:

Բացակա էին՝ Գայանե Ալլահվերդյանը, Անահիտ Բաղալյանը, Արթուր Դավթյանը, Անդրանիկ Թամազյանը, Արկադի Թամազյանը, Տելեմակ Աղվանյանը, Սենիկ Չերչինյանը, Տիգրան Պապոյանը, Արամ Ռամազյանը, Մանվել Ռամազյանը, Թագուհի Վարոսյանը, Աբել Տիտանյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝ Արթուր Շախկուլյան, Շողիկ Քառյան, Սամվել Թորոսյան, Կարինե Սիմոնյան, Արթուր Հովհաննիսյան , Ալավերդի համայնքի վարչական տարածքների ղեկավարներ,աշխատակազմի աշխատակիցներ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Ղումաշյանը

Նիստը արձանագրում էր ՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հեղինե Ճիճիլյանը

Նախքան օրակարգային հարցերին անդրադառնալը, համայնքի ղեկավարի կողմից առաջարկվեց օրակարգում ավելացնել 4 հարց, որին համայնքի ավագանին կողմ քվեարկեց (15 կողմ):

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2024 թվականի մայիսի 15-ի հերթական թիվ 6 նիստի հետևյալ օրակարգը՝

1.1 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2024 թվականի մայիսի 15-ի հերթական թիվ 6 նիստի օրակարգը հաստատելու մասին.

1.2 Համայնքային սեփականություն հանդիսացող գույքերն աճուրդային եղանակով օտարելու թույլտվություն տալու և նրանց մեկնարկային գները հաստատելու մասին.

1.3 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող, կադաստրային 06-069-0146-0003 ծածկագրով հողամասն օտարելու մասին.

1.4 Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Թբիլիսյան խճուղի, 5/2 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքը և զբաղեցրած՝ 0.34 հա մակերեսով հողամասն անհատույց օգտագործման տրամադրելու և Ալավերդի համայնքի ավագանու 31.03.2022թ. N 21-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

1.5 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականությունը հանդիսացող 06-002-0045-0023 կադաստրային ծածկագրով 0.47498 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք հողամասը վարձակալության իրավունքով մրցութային կարգով տրամադրելու մասին.

1.6 Օրինական ճանաչված կառույցները և համապատասխան հողամասերը՝ տվյալ կառույցներն իրականացրած անձանց գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին.

1.7 Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0204-0056 ծածկագրով 0.0019 հա մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին.

1.8 Ալավերդի համայնքի Ճոճկան գյուղի 6-րդ փողոց, 29 հասցեում գտնվող, 06-069-0070-0036 ծածկագրով, 0.02435 հեկտար հողամասը հայաստանի հանրապետությանը նվիրելու մասին.

1.9 Օրինական ճանաչված կառույցները և համապատասխան հողամասերը՝ տվյալ կառույցներն իրականացրած անձանց գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին.

1.10 Ոչ պիտանի գույքը դուրս գրելու մասին

1.11 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 136-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

1.12 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման համակարգերը անհատույց օգտագործման իրավունքով և անժամկետ «Լոռի» ջրօգտագործողների ընկերությանը հանձնելու մասին.

1.13 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 15 հունվարի 2024 թվականի թիվ 09-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

1.14 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

1.15 Ալավերդի համայնքի «թիվ 1 ԲՇՏ» եվ «թիվ 2 ԲՇՏ» ՓԲԸ-ների խորհուրդների նոր կազմեր հաստատելու եվ վերստուգող նշանակելու մասին

1.16 ՈՒսանողներ Սվետլանա Վիտալիի եվ Լուսինե Վիտալիի Դանիելյանների ուսման վարձի մասնակի փոխհատուցման մասին

1.17 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականությունը հանդիսացող 06-003-0039-0017 կադաստրային ծածկագրով 46,2 քմ մակերեսով գույքը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու եվ վարձավճարի չափ սահմանելու մասին

1.18 **«ՏՏՎ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի և Ալավերդի համայնքի միջև 11.05.2021թ-ին կնքված «Ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման» եվ 07.05.2022 թ-ին կնքված «Անշարժ գույքի վարձակալության» պայմանագրերի լուծմանը համաձայնություն տալու մասին**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56-Ա/

Լսեցին՝

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ /Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, հիմք ընդունելով տրանսպորտային միջոցների YB209141, YB195530, ВЩ678816 տեխնիկական անձնագրերը, գույքի նկատմամբ սեփականության իրավունքի N 28022022-06-0042 և N 30102019-06-0098 վկայականները, հետազոտությունների և դատական փորձաքննությունների կենտրոն «Անիկոմ» ՍՊ ընկերության մասնագիտացված փորձագիտական հաստատության փորձագետի կողմից տրված թիվ ԱՊ02/24Ա-035/1, ԱՊ02/24Ա-035/2 և ԱՊ02/24Ա-035/3 գույքերի արժեքի հետազոտության մասին եզրակացությունները և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Թույլատրել բաց (դասական) աճուրդային եղանակով օտարելու Ալավերդու համայնքապետարանին պատկանող ներքոնշյալ՝ թվով 5 տրանսպորտային միջոցները, 2 հատուկ տեխնիկաները և 2 անշարժ գույքերը.
   1.1 «GAZ 31105-120» մակնիշի, 942 CQ 61 հաշվառման համարանիշով թեթև մարդատար ավտոմեքենան՝ տեխ. անձնագրի համար՝ YB209141, նույնացման համարը՝ X9631105051269638, թողարկման տարեթիվը 2005, մեկնարկային գինը՝ 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
   1.2 «Mitsubishi Pajero 2.4» մակնիշի, 038 CT 61 հաշվառման համարանիշով, թեթև մարդատար ավտոմեքենան՝ տեխ. անձնագրի համար՝ YB195530,

նույնացման համարը՝ V25-4404278, թողարկման տարեթիվը 1997, մեկնարկային գինը՝ 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

1.3 «ԳԱԶ» 48321-10 մակնիշի, 893 SU 36 հաշվառման համարանիշով բեռնատար-աղբատար ավտոմեքենան՝ տեխ. անձնագրի համար՝ ВЩ678816, նույնացման համարը՝ XVL48321360000503, թողարկման տարեթիվը 2006, մեկնարկային գինը՝ 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

1.4 «ԳԱԶ» 48321-10 մակնիշի (ԳԱԶ ՍԱԴԿՈ), Ալավերդու համայնքապետարանին պատկանող աղբատար ավտոմեքենան՝ տեխ. անձնագիրը բացակայում է, մեկնարկային գինը՝ 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

1.5 «ԳԱԶ» 3308 մակնիշի, Ալավերդու համայնքապետարանին պատկանող բեռնատար ինքնաթափ ավտոմեքենան՝ տեխ. անձնագիրը բացակայում է, մեկնարկային գինը՝ 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:

1.6 «ЮМЗ 6» մակնիշի, 88-06 АХ պետական համարանիշով Ալավերդու համայնքապետարանին պատկանող հատուկ տեխնիկան (տրակտորը)՝ արտադրության տարեթիվն ըստ տեխնիկական զննության կտրոնում առկա տվյալների՝ 1985թ., մեկնարկային գինը՝ 800 000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

1.7 «JCB 3D» մակնիշի, 0206LS պետական համարանիշով Ալավերդու համայնքապետարանին պատկանող հատուկ տեխնիկան (էկսքավատոր-ամբարձիչ)՝ տեխ. անձնագիրը բացակայում է, մեկնարկային գինը՝ 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

1.8 Ալավերդի համայնքի Ախթալա քաղաքի Շահումյան փողոց, 1 հասցեում գտնվող, 1073 քմ ներքին մակերեսով կաթսայատունը և զբաղեցրած 0.22599 հա մակերեսով կադաստրային 06-003-0017-0002 ծածկագրով հողամասը՝ 8 250 000 (ութ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով:

1.9 Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի 1-ին փողոց, 75 հասցեում գտնվող, 871.8 քմ ներքին մակերեսով անասնաշենքը և զբաղեցրած 0.1002 հա մակերեսով կադաստրային 06-060-0002-0001 ծածկագրով հողամասը՝ 14 000 000 (տասնչորս միլիոն) ՀՀ դրամ մեկնարկային գնով:

2. Աճուրդի մասնակցության վճարը սահմանված է 15000 դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 %-ի չափով:

3. Հանձնարարել համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովին.

   3.1 Վերը նշված գույքի աճուրդային եղանակով օտարումը կազմակերպել սահմանված կարգով:

   3.2 Վճարումը կատարել ՀՀ արժույթով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ 06-069-0146-0003 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով սեփականության իրավունքի N 25042024-06-0108 վկայականը, Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, Ճոճկան գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-069-0146-0003 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք հողատեսքի 0.1093 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

   Աճուրդի մեկնարկային գին սահմանել 601 150 (վեց հարյուր մեկ հազար մեկ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:
2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապիցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեքներ կայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Հողամասի օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:
4. Ալավերդի համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել որոշմամբ սահմանված հողամասերի աճուրդը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշումն ընդունվեց.

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58-Ա/

Լսեցին՝

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ, 5/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԸ և ԶԲԱՂԵՑՐԱԾ՝ 0.34 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 31.03.2022Թ. N 21-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին կետի 2) ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21) ենթակետով, 35-րդ հոդվածի 1-ին կետի 16) և 18) ենթակետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, 37-րդ հոդվածով, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջին համապատասխան, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման կարգի 14-րդ կետի ա) ենթակետով, 38-րդ կետի ա) ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 29.01.2020թ. թիվ 01/106.3.1/00673-2020 գրությունը, համայնքի սեփականության իրավունքի N 10022022-06-0045 վկայականը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Թբիլիսյան խճուղի, 5/2 հասցեում գտնվող, մանկապարտեզի շենքը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած՝ 0.34 հեկտար մակերեսով, կադաստրային 06-002-0162-0016 ծածկագրով հողամասը (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 100220022-06-0045) անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Ալավերդի համայնքի Ամալյա Կարապետյանի անվան թիվ 7 մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:
2. Հանձնարարել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ կազմակերպել անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման աշխատանքները:
3. Ուժը կորցրած ճանաչել Ալավերդի համայնքի ավագանու 31.03.2022թ. «ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱԼՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 7 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԸ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 21-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-002-0045-0023 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.47498 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ

ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՁԵԿ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 10-րդ, 11-րդ, 128-րդ, 129-րդ, 169-րդ, 464-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, 77-րդ և 80-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ, 35-րդ, հոդվածներով, 56-րդ հոդվածի առաջին, հինգերորդ և ութերորդ մասերով, 57-րդ հոդվածի առաջին, երկրորդ և յոթերորդ մասերով, 76-րդ, 77-րդ, 78-րդ, հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի (այսուհետ՝ համայնք) ղեկավարի առաջարկությունը, N 27062023-06-0032 սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող Ալավերդի քաղաքի կադաստրային քարտեզի 06-002-0045-0023 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք հողատեսքի, 0.47498 հեկտար մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված նպատակներով օգտագործելու համար՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, 10 (տասը) տարի ժամկետով տրամադրել ժամանակավոր օգտագործման մրցութային կարգով:

   Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային չափը սահմանել՝ 50000 (հիսուն հազար) դրամ:

2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
   1) Հողամասի վարձակալությամբ իրավունքով տրամադրումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը, ինչպես նաև չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:
   2) Հողամասը վարձակալությամբ իրավունքով տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և հողային օրենսդրությամբ սահմանված այլ սահմանափակումներ չկան, ինչպես նաև համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար:

3. Համայնքի ղեկավարին՝

1) Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթի կազմակերպման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծել մրցութային հանձնաժողով և գլխավորել այն, ինչպես նաև սահմանել մրցույթի պայմանները (հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը, հողամասի չափը և վարձակալության ժամկետը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, վճարի մեկնարկային չափը, օգտագործման նպատակը, հաղորդակցուղիների առկայությունը, հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը, հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկական պահանջները, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները, կարող է սահմանել նաև լրացուցիչ այլ պահանջներ ու պայմաններ):

2) Մրցույթում լավագույն պայմանները ճանաչելու և մրցույթի մասնակիցների կողմից մրցութային պայմանների բավարարման աստիճանը գնահատելու նպատակով սահմանել մրցութային պայմանները միասնական կշռային գործակցով գնահատելու մեթոդ:

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպել և իրականացնել հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակով անցկացվող մրցույթը, որի մասին ընդունել համապատասխան իրավական ակտ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է 60-Ա/

Լսեցին՝

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ և ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ՝ ՏՎՅԱԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

1. Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման պահանջներով,Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ղեկավարի 07.12.2023թ. N 1409-Ա, 02.02.2024թ. N 266-Ա, 09.04.2024թ. N 640-Ա, 08.05.2023թ. N 569-Ա,

25.12.2023թ. N 1488-Ա, 08.02.2024թ. N 301-Ա, 16.01.2024թ. N 88-Ա և 23.04.2024թ. N 747-Ա, որոշումները, սեփականության իրավունքի N 10042024-06-0049 (գաղտնաբառ՝ VRV7SADJXR46), N 15042024-06-0004 (գաղտնաբառ՝ 64ZIQAAZBKFE), N 26042024-06-0018 (գաղտնաբառ՝ QZE5HTMXRJUT), 24052023-06-0071 (գաղտնաբառ՝ CFBPRPQVFEDR), 26042023-06-0061 (գաղտնաբառ՝ SSBIFGHAW1PN), 29042024-06-0012 (գաղտնաբառ՝ BEBIVTNXVWW5), 02052024-06-0050 (գաղտնաբառ՝ BAET392NFMYH) վկայականները, հաշվի առնելով, որ կառույցներն իրականացրած անձանց կողմից ընդունվել են ուղղակի վաճառքով գնելու առաջարկը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Երևանյան խճուղի, 41/8 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի՝ 07.12.2023թ. N 1409-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 31.0 քմ արտաքին մակերեսով նկուղով ավտոտնակի սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00217 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0007-0027/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Ռիտա Աղվանի Դալլաքյանին:

2. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս, Գ. Օսիպյան փողոց, 5/3 հասցեումգտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 02.02.2024թ. N 266-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 36.3 քմ արտաքին մակերեսով ավտոտնակի սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00363 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0152-0066/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Սամվել Մամրեի Քոչինյանին:

3. ՀՀ Լոռումարզ, համայնք Ալավերդի, գյուղ Քարկոփ, 1-ին փողոց, 6/5 հասցեումգտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 09.04.2024թ. N 640-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 85.15 քմ արտաքին մակերեսով բնակելի տան սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00404 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-111-0004-0105/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Ռոման Արևշատի Եսայանին:

4. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, գյուղ Շնող, 1-ին փողոց, 120/2 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 08.05.2023թ. N 569-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 80.0 քմ արտաքին մակերեսով խանութի սահմանված դրույքաչափին

համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.01207 հա բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-088-0059-0004/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Պավել Բարսեղյանին:

5. ՀՀ Լոռումարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Սայաթ-Նովա փողոց, 1/17 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 25.12.2023թ. N 1488-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 52.7 քմ արտաքին մակերեսով նկուղով ավտոտնակի սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00231 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0027-0117/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Գեորգի Գուրգենի Թամազյանին:

6. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս, Պղնձագործների փողոց, 2/6 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 08.02.2024թ. N 301-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 104.6 քմ արտաքին մակերեսով տնտեսական սենյակով ավտոտնակի սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00523 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0150-0132/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Արման Սեյրանի Կոստանդյանին:

7. ՀՀ Լոռումարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Խուդյակով փողոց, 3/3 հասցեումգտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 16.01.2024թ. N 88-Ա և 23.04.2024թ. N 747-Ա որոշումներով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 41.4 քմ արտաքին մակերեսով ավտոտնակի սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00414 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0028-0220/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Սաթենիկ Սարիբեկի Աբգարյանին:

8. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ կառույցներն իրականացրած անձանց հետ կնքելու կառույցի և զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի պայմանագրեր:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61-Ա/
Լսեցին՝
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-002-0204-0056

ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.0019 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին կետի 4) մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով Մանվել Սերյոժայի Մալխասյանի կողմից լիազորված անձ Ինա Էդիկի Պետրոսյանի դիմումը, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N 30082023-06-0023 վկայականը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաքի կադաստրային քարտեզի 06-002-0204-0056 ծածկագրով, ավտոտնակով ծանրաբեռնված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0019 հա մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով, 15048 /տասնհինգ հազար քառասունութ/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով, օտարել ավտոտնակի սեփականատեր հանդիսացող՝ Մանվել Սերյոժայի Մալխասյանին:
2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62-Ա/

Լսեցին՝
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՃՈՃԿԱՆ ԳՅՈՒՂԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑ, 29 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-069-0070-0036 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.02435 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 89-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդհոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի 29/04/2024թ. N 01/111.6/03740-2024 - գրությունը, համայնքի սեփականության իրավունքի N 10022020-06-0032 վկայականը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Համայնք Ալավերդի, գյուղ Ճոճկան, 6-րդ փողոց, 29 հասցեում գտնվող, պետական սեփականության ուսուցչի տան շենքի պահպանման և սպասարկման համար զբաղեցրած 06-069-0070-0036 կադաստրային ծածկագրով , բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության համայնքային սեփականության 0.02435 հեկտար մակերեսով Հայաստանի Հանրապետությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված հողամասը նվիրել Հայաստանի Հանրապետությանը:

2. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ սահմանված կարգով կնքելու հողամասին վիրատվության մասին պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63-Ա/

Լսեցին՝
ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ և ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ՝ ՏՎՅԱԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման պահանջներով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ղեկավարի 15.03.2024թ. N 489-Ա, 10.08.2020թ. N 242-Ա և 21.02.2023թ. N 239-Ա որոշումները, սեփականության իրավունքի N 07052024-06-0103 (գաղտնաբառ՝ AKGIHTSMRLVR), N 08052024-06-0009 (գաղտնաբառ՝ QVCYBVFTRCBW) վկայականները, հաշվի առնելով, որ կառույցն իրականացրած անձի կողմից ընդունվել են ուղղակի վաճառքով գնելու առաջարկը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Սանահին կայարան թաղամաս, 18/12 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 15.03.2024թ. N 489-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 41.6 քմ արտաքին մակերեսով նկուղով ավտոտնակի սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00363 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության

հողամասը /ծածկագիր՝ 06-002-0201-0034/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Սվետլանա Ռաֆիկի Բեժանյանին:

2. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Սայաթ-Նովա փողոց, 2-9/1 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 10.08.2020թ. N 242-Ա և 21.02.2023թ. N 239-Ա որոշումներով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 29.4 քմ արտաքին մակերեսով ավտոտնակի սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00294 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0038-0373/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Արմինե Գրիշայի Ասատրյանին:
3. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ կառույցներն իրականացրած անձանց հետ կնքելու կառույցի և զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի պայմանագրեր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64-Ա/

Լսեցին.

ՈՉ ՊԻՏԱՆԻ ԳՈՒՅՔԸ ԴՈՒՐՍ ԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով «Ալավերդու մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրենի զեկուցագիրը և համապատասխան հանձնաժողովի կողմից կազմված ակտը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. «Ալավերդու մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի գույքացանկից և հաշվեկշռից դուրս գրել ոչ պիտանի գույքը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 136-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ***/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, 34-րդ հոդվածով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 136-Ն որոշման հավելվածի 1, 2, 3 4, 5, 6 հատվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն N 1, 2, 3 , 4, 5, 6 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66 -Ն/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ «ԼՈՌԻ» ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով «Լոռի» Ջրօգտագործողների ընկերության գործադիր տնօրեն Ա. Ղարիբյանի՝ 22.04.2024 թվականի թիվ 79, ՀՀ Լոռու մարզպետ

Ա. Ղազարյանի՝ 07.05.2024թ. թիվ 01/108.4.2/03961-2024 գրությունները և Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման համակարգերը անհատույց օգտագործման իրավունքով եվ անժամկետ հանձնել «Լոռի» ջրօգտագործողների ընկերությանը ՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 15 ՀՈՒՆՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 09-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 15 հունվարի 2024 թվականի թիվ 09-Ա որոշումը:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68 -Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Դ. Ղումաշյան

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի հունիսի 14-ը, ժամը՝ 16:00:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69 -Ա/

Լսեցին՝

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԹԻՎ 1 ԲՇՏ» ԵՎ «ԹԻՎ 2 ԲՇՏ» ՓԲԸ-ՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՆՈՐ ԿԱԶՄԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ և 42-րդ կետերով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել «Թիվ 1 ԲՇՏ», «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲԸ-ների խորհուրդի նոր կազմը.
   խորհրդի նախագահ՝

   Հարություն Ձավարյան - համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,

   անդամներ՝

   Արթուր Շախկուլյան - համայնքի ղեկավարի տեղակալ

   Էրմինե Գաբրիելյան -գլխավոր մասնագետ-իրավաբանի պաշտոնակատար

   Կոստանդյան Լիանա - քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար

   Հրանտ Հախվերդյան - ավագանու անդամ

   Արեն Դալլաքյան - ավագանու անդամ
2. «Թիվ 1 ԲՇՏ», «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲԸ-ների համար վերստուգող նշանակել համայնքի ղեկավարի տեղակալ Արթուր Շախկուլյանին:
3. Ընկերությունների տնօրենների խորհրդի նախագահ Հարություն Ձավարյանին՝ կազմել և հաստատել ընկերությունների հաստիքացուցակները:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70 -Ա/

Լսեցին՝

ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ՍՎԵՏԼԱՆԱ ՎԻՏԱԼԻԻ ԵՎ ԼՈՒՍԻՆԵ ՎԻՏԱԼԻԻ ԴԱՆԻԵԼՅԱՆՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ /ՁԵԿ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 31-ի N 11-Ա որոշման 19-րդ կետի, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝ համայնքի աավագանին որոշում է .

1. Վճարել Ալավերդի համայնքի քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ 1/12 շենք,բն. 14 հասցեի բնակիչներ, ուսանողներ Սվետլանա Վիտալիի և Լուսինե Վիտալիի Դանիելյանների 2023-2024 թվականների ուսումնական տարվա վարձավճարները.
   1.1 Սվետլանա Վիտալիի Դանիելյան (Հայաստանի Հանրապետության Հյուսիսային համալսարանի Ալավերդու բաժանմունքի «Ընդհանուր մանկավարժություն» մասնագիտության հեռակա ուսուցման վճարովի համակարգի 2-րդ կուրս) 115000 (մեկ հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով (Հ/Հ 2470100558500000):
   1.2 Լուսինե Վիտալիի Դանիելյան (Երևանի պետական համալսարանի «Կենսաբանություն» ֆակուլտետի հեռակա ուսուցման վճարովի համակարգի 3-րդ կուրս 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով (Հ/Հ 2470100009060000):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71 -Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-003-0039-0017 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 46,2 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին օրենքի» 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 10-րդ, 11-րդ, 128-րդ, 129-րդ, 169-րդ հոդվածների և հիմք ընդունելով քաղաքացի Արտակ Համբարձումյանի դիմումը և ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետություն , Ալավերդի համայնք, քաղաք Ախթալա, Ռաֆֆու փողոց, 2 շենք, 4 բնակարան հասցեի համայնքային

1. սեփականություն հանդիսացող 46.2 քմ մակերեսով անշարժ գույքը 10 տարի ժամկետով վարձակալության իրավունքով ժամանակավոր օգտագործման տրամադրել Արտակ Համբարձումյանին:
2. Տարածքի վարձակալության արժեքը 1 ամսվա համար սահմանել 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ:
3. Առաջարկել ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարին Արտակ Համբարձումյանի հետ կնքել վարձակալության պայմանագիր:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72 -Ա/

Լսեցին՝

«ՏՏՎ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-Ի ԵՎ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋև 11.05.2021Թ-ԻՆ ԿՆՔՎԱԾ «ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ» ԵՎ 07.05.2022 Թ-ԻՆ ԿՆՔՎԱԾ «ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԼՈՒԾՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ«ՏՏՎ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի **և Ալավերդի համայնքի միջև 11.05.2021թ-ին կնքված «Ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման»** պայմանագրում արտացոլված չէ Պայմանագրի կնքմանը նախորդած գրավոր բանակցություններում Ընկերության ստանձնած բազմաթիվ պարտավորություններ, Պայմանագրի կնքման օրվանից մինչ օրս «ՏՏՎ Քոնսալթինգ» ՍՊԸ իրականացրել է բացառապես սեփական տնտեսական շահով պայմանավորված գործունեություն, հաշվի առնելով Ալավերդի համայնքի շահը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. **Տալ համաձայնություն** «ՏՏՎ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի **և Ալավերդի համայնքի միջև 11.05.2021թ-ին կնքված «Ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման» և 07.05.2022թ-ին կնքված «Անշարժ գույքի վարձակալության»** պայմանագրերի լուծմանը:
2. Ալավերդի համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպել վերոնշյալ պայմանագրերի լուծման գործընթացը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73 -Ա/

Ավագանու անդամներ՝

ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԵՆ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ԵՐԻՑՅԱՆ

ՍԻՄՈՆ ԶԱԽԱՐՈՎ

ՖԼՈՐԱ ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ

ՀՐԱՆՏ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՁԱՎԱՐՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՂՈՒԼՅԱՆ

ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՄԿՐՏԻՉ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

ԼՈՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՍՄԲԱՏՅԱՆ

ՀԱՅԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Համայնքի ղեկավար՝

ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ ՀԵՂԻՆԵ ՃԻՃԻԼՅԱՆԸ

_____